Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիա

2022-2024 թթ. ռազմավարական պլան

Բովանդակություն

Ռազմավարական պլանավորման նպատակները և մեթոդաբանությունը 2

Կոալիցիայի գործունեության համատեքստը 3

Կոալիցիայի պատմությունը 3

Արտաքին միջավայրի գնահատում. զարգացումներ և միտումներ 5

Կոալիցիայի ուժեղ և թույլ կողմերի, արտաքին հնարավորությունների և խոչընդոտների քարտեզագրում 1

Հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրների քարտեզագրում 1

Կոալիցիայի գործունեության ռազմավարական շրջանակը 2022-2024 թթ. համար 6

Կոալիցիայի տեսլականը 6

Կոալիցիայի առաքելությունը 6

Կոալիցիայի արժեքները և սկզբունքները 6

Ռազմավարական ուղղություններ 6

Ռազմավարական պլանավորման նպատակները և մեթոդաբանությունը

Սույն փաստաթուղթն ամփոփում է Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիայի ռազմավարական պլանավորման գործընթացի արդյունքները: Գործընթացը նպատակ է ունեցել ձևավորել Կոալիցիայի գործունեության հստակ և համաձայնեցված ռազմավարական շրջանակ՝ հիմնված երկրի համատեքստի, անդամ կազմակերպությունների կարողությունների և փորձի, հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրների վերաբերյալ միասնական պատկերացման վրա:

Ռազմավարական պլանավորման գործընթացը տեղի է ունեցել 2021 թ. դեկտեմբեր – 2022 թ. փետրվար ամիսներին: Այն ներառել է հետևյալ գործողությունները՝

- Կոալիցիայի աշխատակազմի հանդիպում՝ ռազմավարական պլանավորման գործընթացի պարամետրերի համաձայնեցման նպատակով: Հանդիպման արդյունքում հստակեցվել են ռազմավարական պլանավորման սկզբունքները, ակնկալվող արդյունքները, ռազմավարական պլանի կառուցվածքը:
- Կոալիցիայի գործունեությանն առնչվող փաստաթղթերի ուսումնասիրություն: Ուսումնասիրվել է Կոալիցիայի կողմից ներկայումս իրականացվող ծրագրի առաջարկը, ի մի են բերվել անդամ կազմակերպությունների կողմից ոլորտային հիմնախնդիրների վերհանման արդյունքները:
- Ռազմավարական պլանավորման աշխատանքային հանդիպում Կոալիցիայի աշխատակազմի և անդամ կազմակերպությունների մասնակցությամբ: Եռօրյա հանդիպման ընթացքում իրականացվել է Կոալիցիայի գործունեության ներքին և արտաքին միջավայրի գնահատում, շահառուների կարիքների քարտեզագրում, 2020-2022 թթ. համար ռազմավարական առանցքային ուղղությունների վերհանում և ռազմավարական շրջանակի ձևակերպում: Հանդիպման ընթացքում նաև քննարկվել են Կոալիցիայի ինստիտուցիոնալ զարգացման և կայացման խնդիրները՝ նոր ռազմավարության լույսի ներքո:

Սույն փաստաթուղթը հանդիսանում է Կոալիցիայի գործունեության 2022-2024 թվականների ռազմավարական պլանը: Այն ներկայացնում է Կոալիցիայի գործունեության համատեքստը և առաջիկա երեք տարիների համար սահմանված ռազմավարական նպատակները՝ ելնելով ռազմավարական պլանավորման աշխատանքային հանդիպման քննարկումներից և կայացված որոշումներից: Որպես հավելված ներկայացված է Կոալիցիայի կանոնադրության ձևանմուշը, որն անդրադառնում է աշխատանքային հանդիպման ընթացքում Կոալիցիայի ինստիտուցիոնալ զարգացման վերաբերյալ քննարկված առանցքային հարցերին:

Ռազմավարական պլանը ենթակա է պարբերական վերանայման և փոփոխման ի արձագանք Կոալիցիայի գործունեության համատեքստի և կարիքների փոփոխություններին: Ռազմավարական պլանի վերանայման և գնահատման գործընթացը սահմանում է Կոալիցիայի Ընդհանուր ժողովը:

Կոալիցիայի գործունեության համատեքստը

Կոալիցիայի պատմությունը

Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիան ձևավորվել է «Ագաթ» հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանություն հասարակական կազմակերպության կողմից 2017 թվականին՝ նպատակ ունենալով համախմբել քաղաքացիական հասարակության ջանքերը հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության օրենսդրության ընդունումը ջատագովելու ուղղությամբ:

2017 թվականից ի վեր Կոալիցիայի գործունեությունը չի սահմանվել որևէ ռազմավարական փաստաթղթով: Վերջին տարիներին Կոալիցիան առավելապես իրականացրել է ջատագովության և հանրային իրազեկման ծրագրեր՝ ուղղված ընտրական գործընթացներում հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցության խթանմանը:

Կոալիցիան նաև իր ներդրումն է ունեցել Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական ներկայացչությունների և միջազգային կազմակերպությունների կողմից մշակված մարդու իրավունքներին առնչվող փաստաթղթերում և ռազմավարություններում:

Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիան հանդիսանում է հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրներով զբաղվող կազմակերպությունների ամենամեծ կոալիցիան և կազմված է 14 անդամ կազմակերպություններից և 5 անհատ անդամներից:

Անդամ	Կազմակերպության տեսակ	Քաղաք
«Ագաթ» հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության կենտրոն ՀԿ	Հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպություն	Գյումրի
Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ	ՔՀԿ	Վանաձոր
«Լիարժեք կյանք»	Հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպություն	Ստեփանավան
«Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» ՀԿ	Հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպություն	Վանաձոր
«Մենք կարող ենք» ՀԿ	Հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպություն	Երևան

«Լռության ձայնը» ՀԿ	Հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպություն	Երևան
Սիփան Ասատրյան	Անհատ	Երևան
Արմինե Ղազարյան	Անհատ	Երևան
«Փրկություն» հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների կենտրոն	ՀԿ	Երևան
«Կարիտաս արեգակ» հիմնադրամ	Հիմնադրամ	Գյումրի
«Սկարպ» ՀԿ	Հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպություն	Երևան
«Աստղացոլք» ՀԿ	ՀԿ	Ճամբարակ
«Հայկական ճամբար» ՀԿ	ՀԿ	Երևան
«Սպիտակ բազե»	Հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպություն	Սպիտակ
Նարե Ալավերդյան	անհատ	Աբովյան
«Հեշտ կյանք» ՀԿ	Հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպություն	Գյումրի
«Հաշմանդամություն և ներառական զարգացում» ՀԿ	Հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպություն	Երևան
Մուշեղ Հովսեփյան	Անհատ	Երևան
Անահիտ Չիլինգարյան	Անհատ	Երևան

Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիան գրանցված չէ որպես իրավաբանական անձ և հանդիսանում է կազմակերպությունների և անհատների ոչ ֆորմալ միավորում:

Կոալիցիայի ընթացիկ աշխատանքն ապահովում է ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող «Դեպի ներառական Հայաստան» ծրագրի շրջանակներում ձևավորված աշխատակազմը, որը բաղկացած է Կոալիցիայի համակարգողից, հաղորդակցության համակարգողից, ջատագովության համակարգողից, իրավական համակարգողից, երկու իրավաբանից, համայնքների հզորացման համակարգողից: Կոալիցիայի անդամ կազմակերպությունների և անհատ անդամների կողմից կազմված Ընդհանուր ժողովը հանդիսանում է Կոալիցիայի որոշումներ կայացնող բարձրագույն մարմինը:

Արտաքին միջավայրի գնահատում. զարգացումներ և միտումներ

Հայաստանը ներկայումս գտնվում է հետճգնաժամային իրավիճակում՝ պայմանավորված COVID-19 համավարակի և 44-օրյա պատերազմի աղետալի հետևանքներով: 2020 թվականին սկսված համավարակը, որի հետևանքներն առավել ծանր են անդրադառնում հասարակության խոցելի խմբերի, ներառյալ՝ հաշմանդամություն ունեցող անձանց վրա, ռազմավարության պլանավորման պահին չունի որևէ կանխատեսելի հեռանկար: Համավարակը հանգեցրել է սոցիալական և առողջապահական համակարգերի ծանրաբեռնվածության, ինչը շարունակելու է խոչընդոտներ ստեղծել ծառայությունների մատչելիության տեսանկյունից: Հեռավար կրթության անցնելը համավարակի ընթացքում սրել է կրթական անհավասարությունները: 2020 թվականին տեղի ունեցած Արցախյան երկրորդ 44-օրյա պատերազմն առաջացրել է հումանիտար ճգնաժամ, որը ևս չի կարելի համարել հանգուցալուծված: Արցախից տեղահանվածների, զինվորական ծառայության ժամանակ հաշմանդամություն ձեռք բերած անձանց, պատերազմի մասնակիցների և նրանց ընտանիքների սոցիալական խնդիրները օրակարգային են լինելու առաջիկա տարիների ընթացքում:

Համավարակի և հետպատերազմական շրջանում նաև դիտարկվում է տնտեսական ճգնաժամ: Այն արտահայտվում է վառ ընդգծված գնաճով, գործազրկության աճով:

2021 թվականի արտահերթ խորհրդարանական ընտրությունները մեղմեցին հետպատերազմյան քաղաքական անկայունությունը: Սակայն, քաղաքական ծայրահեղ բևեռացված մթնոլորտը դեռևս պահպանվում է երկրում: Քաղաքական օրակարգում առանցքային են մնում անվտանգային և տնտեսական հիմնախնդիրները, որոնք ընկալվում են որպես առաջնահերթություն նաև հանրության զգալի մասի կողմից: Միևնույն ժամանակ քաղաքական ուժերի և նրանց սպասարկող մեդիայի վարած դիսկուրսում գերակայում է փոխադարձ մեղադրանքներն ու պոպուլիզմը, իսկ հիմնախնդիրների խորքային քննարկումները մնում են լուսանցքում:

Հանրային մասնակցության և քաղաքացիական հասարակության գործունեության տեսանկյունից կարևորագույն գործոն է հանդիսանում քաղհասարակությանը թիրախավորող դիսկուրսն ու ապատեղեկատվությունը: Փորձելով արժեզրկել քաղհասարակության դերակատարումը և թուլացնել հանրային վստահությունը քաղհասարակության կառույցների նկատմամբ՝ քաղաքական ուժերը (հիմնականում ներկայիս ընդդիմությունը) և նրանց հարող շրջանակները պարբերաբար թիրախավորում են քաղհասարակության դերակատարներին և տարածում ապատեղեկատվություն նրանց գործունեության վերաբերյալ:

2021 թվականի մայիսին ընդունվեց «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքը: Նոր օրենքը հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունների տարիներ շարունակ իրականացվող ջատագովության արդյունքն է: Այն մեծամասամբ արտացոլում է քաղաքացիական հասարակության դիրքորոշումներն ու առաջարկությունները: Մասնավորապես, օրենքը սահմանում է երաշխիքներ մատչելիության, անկախ կյանքի, արդարադատության մատչելիության, խելամիտ

հարմարեցումների վերաբերյալ: Օրենքը արգելում է հաշմանդամության հիմքով խտրականությունը, ներառյալ՝ խելամիտ հարմարեցումների չտրամադրելը: Օրենքը նաև հնարավորություն է ընձեռում հասարակական կազմակերպություններին խտրականության դեպքում հայց ներկայացնել դատարան հաշմանդամություն ունեցող անձանց անունից: Օրենքի ընդունումը վկայում է ներկայիս կառավարության՝ հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրներին իրավունքահեն լուծումներ առաջարկելու քաղաքական կամքի մասին, թեև դեռևս առկա է օրենքի կիրարկման մեխանիզմների ձևավորման և օրենքի վերաբերյալ հանրային իրազեկման անհրաժեշտություն: Հատկապես խնդրահարույց է այն, որ օրենքով չի նախատեսվում ստեղծել մատչելիության վերահսկողության և խթանման անկախ պետական մարմին:

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության օրենսդրության և քաղաքականության հետագա զարգացման առումով նշանակալի են Կառավարության կողմից կրթության, առողջապահության և զբաղվածության ոլորտներում ռազմավարական ծրագրերի մշակումը և իրականացումը, ՀՀ-ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով նախատեսված բարեփոխումների իրականացումը, ՄԱԿ-ի պայմանագրային մարմինների (CRPD, CRC, CEDAW)՝ առաջիկա տարիներին սպասվող զեկույցները: Միևնույն ժամանակ, գործող կառավարության անկայուն կադրային քաղաքականությունը և պետական ինստիտուտների նկատմամբ հանրային վստահության ցածր մակարդակը խոչընդոտներ են ստեղծում արդյունավետ բարեփոխումների իրականացման համար:

Տեղական կառավարման մակարդակում նշանակալի է համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի աճը: Ծրագրերի մշակման և իրականացման մասնակցային բնույթը հնարավորություն է տալիս խթանել մատչելիության ապահովման պահանջը:

Մասնավոր ոլորտում հատկանշական են տեղեկատվական տեխնոլոգիաների և սոցիալական ձեռներեցության ոլորտների շարունակական զարգացումը: SS ոլորտի զարգացումը հնարավորություն է ընձեռում ներգրավել ոլորտի կազմակերպությունների ռեսուրսներն ու կարողությունները տեղեկատվության և հաղորդակցության մատչելիության ապահովմանն ուղղված միջոցառումներում: Սոցիալական ձեռներեցության աջակցության ծրագրերի աճը, շնորհիվ միջազգային դոնոր կազմակերպությունների աճող ներգրավվածության, հնարավորություն է ստեղծում ընդլայնել այդ ծրագրերում հաշմանդամություն ունեցող անձանց ընդգրկվածությունը:

Կոալիցիայի ուժեղ և թույլ կողմերի, արտաքին հնարավորությունների և խոչընդոտների քարտեզագրում

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
• Կոալիցիայի կազմում հաշմանդամություն ունեցող անձանց կողմից ղեկավարվող կազմակերպությունների մեծամասնություն լինելը • Անդամ կազմակերպությունների միջոցով Կոալիցիայի սփռվածությունը մայրաքաղաքում և մարզերում • Կոալիցիայի անդամ կազմակերպությունների ոլորտային բազմազանությունը • Կոալիցիայի կայացածությունը՝ անցած ուղու, ջատագովության փորձի և ճանաչելիության տեսանկյունից • Գործընկերային կապերը ԱԺ որոշ պատգամավորների, ՄԻՊ-ի, կառավարության որոշ անդամների հետ • Համագործակցությունը տեղական ՔՀԿ-ների, կոալիցիաների, միջազգային կազմակերպությունների ներկայացուցչությունների (ՄԱԿ, ԵՄ, ԱՄՆ ՄԶԳ) և որոշ դեսպանությունների հետ • Համայնքային մակարդակում ներկայացվածությունը և կապերը անդամ կազմակերպությունների միջոցով • Ոլորտային փորձագետների ներգրավվածությունը Կոալիցիայում • Անդամ կազմակերպությունների նյութատեխնիկական ռեսուրսները • Իրավապաշտպան ՀԿ-ների ներկայացվածությունը Կոալիցիայում	• Կոալիցիայի կառուցվածքը անհրաժեշտ է վերջնականացնել • Անձնակազմ - անդամներ հարաբերությունների անհստակությունը • Կոալիցիայի գրասենյակի և նյութատեխնիկական ռեսուրսների բացակայություն • Կոալիցիայի անդամակցության ընթացակարգի բացակայությունը • Կոալիցիայի որոշումների կայացման ընթացակարգի բացակայությունը • Կոալիցիայի ֆինանսական ռեսուրսների անկայունությունը • Կոալիցիայի ոլորտային հանձնաժողովները/խմբերը ձևավորված չեն • Կոալիցիայի հաղորդակցության ռազմավարության բացակայությունը • Կոալիցիայի հանրային տեսանելիության անբավարար մակարդակը • Որոշում կայացնողների շրջանում Կոալիցիայի ճանաչվածության անբավարար մակարդակը • ԱԺ խմբակցությունների հետ տարվող աշխատանքների անբավարար մակարդակը • Արտերկրյա դեսպանությունների շրջանում Կոալիցիայի ճանաչվածության անբավարար մակարդակը • Անդամ կազմակերպությունների ծանրաբեռնվածություն

• Կոալիցիայի անդամների միջև փոխվստահության առկայությունը • Կոալիցիայի գործունեության ապաքաղաքական բնույթի ապահովումը • Կոալիցիայի գործունեության թափանցիկությունը	• Անդամ կազմակերպությունների կարողությունների ոչ համաչափ զարգացվածություն • Ոչ բոլոր մարզերում ներկայացվածություն • Հաշմանդամություն ունեցող անձանց ոչ բոլոր խմբերի ներգրավվածությունը Կոալիցիայում • Անդամ կազմակերպությունների միջև ջատագովության համակարգման դժվարությունը • Համատեղ ջատագովության ռազմավարության բացակայությունը • Քաղաքական հայացքների անհամաձայնություն անդամների միջև • Արտակարգ իրավիճակներին (COVID, պատերազմ) արձագանքելու ընթացակարգի բացակայություն
Հնարավորություններ	Խոչընդոտներ և վտանգներ
• Համագործակցության և գործընկերային կապերի ընդլայնումը որոշում կայացնողների հետ • Համագործակցությունը ՋԼՄ-ների հետ • Նոր անդամներ ներգրավելը և նոր ոլորտային/մասնագիտական ուղղությունների ավելացնելը • Ջինհաշմանդամություն ունեցող անձանց ընդհանուր հաշմանդամության պայքարին ներգրավելը • Նոր դրամաշնորհների հնարավորությունը • Օրենսդրական և քաղաքականության բարեփոխումներին Կոալիցիայի մասնակցությունը • Միջազգային ջատագովության մեխանիզմների ընձեռած հնարավորությունները (CRPD, CEDAW, CRC, UPR, CEPA)	• Կառավարության դիրքորոշումների և առաջնահերթությունների փոփոխություն • Արտակարգ իրավիճակներ • Անդամ կազմակերպությունների զբաղվածություն և Կոալիցիայի աշխատանքներին ներգրավվածության նվազում • Ֆինանսավորման աղբյուրների բազմազանության ապահովման և դոնորից կախվածության վտանգ • Ֆինանսավորման աղբյուրների համար մրցակցություն • Մրցակից կազմակերպությունների կողմից Կոալիցիայի դիրքորոշումից տարբերվող գաղափարների առաջխաղացում • Պետական համակարգում կոռուպցիոն ռիսկեր • Քաղաքական դաշտի անկայունություն

• Կոալիցիայի գործունեության ընդլայնումը դեպի իրազեկման և կարողությունների զարգացման ծրագրեր • Կոալիցիայի անդամների միջև գիտելիքների և ռեսուրսների փոխանակումը	• Շահառուների կարիքների և Կոալիցիայի գործունեության միջև անջրպետ

Հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրների քարտեզագրում

Օրենքի առաջ հավասարություն

- Հակախտրականության համապարփակ օրենսդրության բացակայություն: Առկա օրենսդրական դրույթները չեն կիրառվում
- Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ընդունված օրենքի կիրարկման մեխանիզմների բացակայություն
- Նոր օրենքի «սինխրոնիզացման» անհրաժեշտություն այլ ոլորտային օրենքների հետ:
- Հաշմանդամություն ունեցող անձի գործունակության իրավունքի մյուսների հետ հավասար հիմքով ճանաչման, ապահովման և իրացման արդյունավետ օրենսդրության բացակայություն
- Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձին անգործունակ ճանաչելու և իր փոխարեն որոշումներ կայացնելու (խնամակալության) ինստիտուտի վերացման անհրաժեշտություն
- Քաղաքացիաիրավական, ներառյալ պայմանագրային հարաբերություններում գործընթացների և փաստաթղթերի մատչելիության պահանջի բացակայություն
- Պետական մարմինների և ծառայություն մատուցողների համար համակարգված վերապատրաստումների և իրազեկման անհրաժեշտություն որոշումների կայացման իրավունքի վերաբերյալ:

Մատչելիություն

- Ֆիզիկական մատչելիության հիմնախնդիրները, վերահսկողության բացակայությունը, մասնագիտական համայնքի և որոշում կայացնողների շրջանում ֆիզիկական մատչելիության վերաբերյալ թյուր պատկերացումների առկայություն
- Ֆիզիկական մատչելիության խնդիրները համայնքային ենթակառուցվածքներում, կրթության բոլոր մակարդակներում, բնակարանային, հանրային վայրերում, մանկական խաղահրապարակներում, մշակութային կենտրոններում, հանգստավայրերում, սպորտային կենտրոններում, տրանսպորտում
- Տեղեկատվական մատչելիության վերաբերյալ իրազեկվածության պակաս տարբեր մակարդակներում, ներառյալ որոշում կայացնողների, վերահսկող պետական մարմինների, և այլոց շրջանում
- Իրավական փաստաթղթերի, վեբ-կայքերի, հանրային օգտագործման և իրազեկման համար նախատեսված նյութերի, կրթական նյութերի մատչելիության պակաս
- Հաղորդակցման անմատչելիություն՝ հաշմանդամություն ունեցող անձանց տարբեր խմբերի հետ հաղորդակցություն ապահովելու համար
- Ժեստերի լեզվի ուսուցման ծրագրերի բացակայություն, որակավորված ժեստերի լեզվի թարգմանիչների բացակայություն
- Հայերեն ժեստերի լեզվով թարգմանությամբ ուղեկցվող հաղորդումների բացակայություն
- Չտեսնողների համար հայերեն ընթերցող ծրագրի բացակայություն

Ապաինստիտուցիոնալացում

- Խնամքի ծառայությունների փոխակերպման գործողությունների ընդհանուր ծրագրի բացակայություն
- Անկախ կյանքի ծառայությունների բացակայություն, որոնք կլինեն կարիքների և արդյունավետության գնահատման հիման վրաՀաստատություններում ապրող անձանց ուղղակի ծառայություններ տրամադրելու անհնարինությունը
- Հաստատություններ ընդունելու պրակտիկան շարունակվում է
- Շուրջօրյա խնամքի հաստատություններում բնակվող հաշմանդամություն ունեցող անձինք չեն կարող օգտվել բնակարան ձեռք բերելու պետական ծրագրից

Սոցիալական ծառայություններ և սոցիալական վերականգնում

- Վերականգնողական և սոցիալ-հոգեբանական ծառայությունների հասանելիության, շարունակականության խնդիրներ, բովանդակության անհստակություն
- Սոցիալական ներառման ծրագրերի իրականացման մեթոդական ուղեցույցների բացակայություն
- Սոցիալական օգնականի/ պատրոնաժի/ անձնական օգնականի ծառայության բացակայություն
- Միջավայրային հարմարեցումների վերաբերյալ մասնագիտացված խորհրդատվությունների տրամադրման բացակայություն
- Հաշմանդամություն ունեցող անձանց հետ աշխատող մասնագետների վերապատրաստումները պատշաճ չեն կարևորվում, պահանջվում կամ իրականացվում,
- Միջգերատեսչական թույլ համագործակցություն կրթության, առողջապահության և սոցիալական ոլորտներում
- Հարբժշկական ծառայությունների դուպլիկացիա առողջապահության, կրթության և սոցիալական ոլորտներում
- Սոցիալական ծրագրերի իրականացման համար իրավական մեխանիզմների անորոշություն, պատասխանատուների անհստակություն
- Հավաստագրված սոցիալական ծառայությունների և աջակցող սարքեր տրամադրող որակավորված կազմակերպությունների գործունեության հանդեպ վերահսկողության մեխանիզմի անհստակություն
- Ծառայություններ մատուցող մասնագիտացված կազմակերպությունների և ռեսուրս կենտրոնների բացակայությունը կամ սահմանափակ թիվը
- ՏԻՄ-երում սոցիալական ոլորտում առավել հաճախ տրվում են ժամանակավոր և կարճաժամկետ լուծումներ, և աջակցության ծրագրերը չեն վերափոխվում մարդու կյանքի որակը փոխող ծառայությունների
- Ծառայությունները չեն տրամադրվում՝ ելնելով անհատական կարիքի գնահատումից
- Ծառայությունների կրկնություն

Հոգեկան առողջություն

- Հոգեկան առողջության մասին օրենքի, ռազմավարության բացակայություն
- Հոգեկան առողջության և սոցիալական խնամքի ինտեգրված, ճկուն և համայնքահենք ծառայությունների բացակայություն
- Հոգեկան առողջության վերաբերյալ հանրային համակարգված իրազեկման անհրաժեշտություն
- Հոգեբուժության ոչ հոժարակամ ձևերի վերացմանն ուղղված հայեցակարգի բացակայություն
- Հոգեբուժական հիվանդանոցային ծառայությունները հանգեցնում է անձի հիմնարար իրավունքների խախտումներին՝ ազատազրկում մեկուսացում, վատ վերաբերմունք, խտրականություն
- Հոգեբուժական հիվանդանոցային ծառայությունների ինտեգրումը ընդհանուր առողջապահական ծառայությունների համատեքտում ցածր է:

Առողջապահություն

- Բուժ- վերականգնողական ծառայությունների բյուջետային պլանավորման, շարունակականության և պարբերականության ոչ բավարար մակարդակ
- Հաշմանդամություն ունեցող կանանց համար սեռական և վերարտադրողական առողջության ֆիզիկական և տեղեկատվական մատչելիության պակաս
- Վստահության պակաս պետական պատվերով ծառայությունների նկատմամբ

- Արտոնյալ պայմաններով դեղերի տրամադրման ծրագրի անարդյունավետություն, անհրաժեշտ դեղերի անհասանելիություն, փոխարինիչների կիրառում
- Առողջապահական հաստատությունների ֆիզիկական միջավայրի և առողջապահական ծառայությունների մատչելիության խնդիր
- Առողջարանային ուղեգրերի բացակայություն մտավոր խնդիրներ ունեցող անձանց համար, իսկ մյուս խմբերի համար դրանց սակավություն, դրանք տրամադրելու մեխանիզմների անհստակություն ու ոչ թափանցիկություն
- Անձնական տվյալների գաղտնիության/պաշտպանության ապահովման խնդիր
- Իրազեկված համաձայնության սկզբունքի չկիրառում
- Պալիատիվ խնամքի անհասանելիություն
- Անորակ բժշկական ծառայությունների դեպքում իրավունքի պաշտպանության մեխանիզմի բացակայություն:

Աշխատանք և զբաղվածություն

- Բիզնես աջակցության ծրագրերում հաշմանդամություն ունեցող անձանց ցածր ընդգրկվածություն:
- Աշխատաշուկա մտնելու խոչընդոտներ, խտրականություն
- Մասնագիտական վերականգնմանն ուղղված ծառայությունների բացակայություն
- Զբաղվածության խթանմանն ուղղված ծրագրերի ցածր արդյունավետություն

- Աշխատատեղերի հարմարեցման (ընդհանրապես խելամիտ հարմարեցումների տրամադրման) ծրագրերի արդյունավետություն

- Գործատուների իրազեկվածության պակաս
- Բուհ-գործատու անարդյունավետ կապ
- Տեսչական մարմնի անարդյունավետություն հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ աշխատաշուկայում խտրականության դեպքերի առումով:

Կրթություն

- Կրթության բոլոր մակարդակներում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կրթության կազմակերպման համար անհրաժեշտ միջավայրային պայմանների անբավարարություն
- Տնային ուսուցում ստացող սովորողների կրթության հիմնախնդիր
- Ոլորտում մանկավարժների պակաս, կարողությունների և գիտելիքների պակաս, կարծրատիպային մոտեցում: Աուտիզմ ունեցող սովորողների հետ աշխատող վարքային թերապիստների անբավարարություն
- Բավարար աշխատանք չի տարվում հաշմանդամություն չունեցող երեխաներ ունեցող ծնողների հետ, որի պատճառով դպրոցներում առկա է հոգեբանական լարվածություն
- Հեռավար ուսուցման պայմաներում կրթությունից դուրս մնալու խնդիրը
- Ուսուցիչների կողմից անհատական ուսուցման պլանների հետևողական կիրառման խնդիր
- Կրթաուսումնական նյութերի մատչելիության խնդիր
- Մատչելի ուսումնաօժանդակ նյութերի բացակայության խնդիր
- Ներառական կրթությունը դիտարկվում է կրթական համակարգի խնդիրներից առանձին

Մարզական կյանք, մշակույթ, ժամանց, հանգիստ

- Հաշմանդամային սպորտի զարգացմանն ուղղված գործողությունների և ուշադրության պակաս պետության կողմից
- Հաշմանդամային սպորտում մասնագետների պակաս
- Ներառական մարզական, մշակութային միջոցառումների կազմակերպման ոչ բավարար քանակ

Աջակցող տեխնոլոգիաներ և սարքեր

- Աջակցող տեխնոլոգիաների վերաբերյալ իրազեկվածության պակաս՝ հասարակության և շահառու խմբերի մոտ
- Պետության կողմից տրամադրվող աջակցող տեխնոլոգիաների տեսականու պակաս
- Աջակցող տեխնոլոգիաների և սարքերի օգտագործման մասին համապատասխան խորհրդատվության համար անհրաժեշտ մասնագետների սակավություն
- Աջակցող տեխնոլոգիաների և սարքերի անհասանելիություն մարզերում
- Աջակցող տեխնոլոգիաների և սարքերի որակի խնդիր, որակի համապատասխանության ստանդարտների պակաս
- Սարքեր առաջարկող կազմակերպությունների սակավություն

Արտակարգ իրավիճակներ և քաղաքացիական պաշտպանություն

- Արտակարգ իրավիճակների պլանավորման, արձագանքի և հետևանքների վերացման գործընթացներում հաշմանդամություն ունեցող անձանց ներգրավվածության խնդիր:
- Ապաստարանների, տարհանման ուղիների անմատչելիություն
- 911 կամ SOS հավելվածի անմատչելիություն

Կոալիցիայի գործունեության ռազմավարական շրջանակը 2022-2024 թթ. համար

Կոալիցիայի տեսլականը

Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիայի տեսլականն է ունենալ ներառական հասարակություն, որտեղ հաշմանդամություն ունեցող անձինք ունեն պաշտպանված իրավունքներ և իրենց ներուժն իրացնելու հավասար հնարավորություններ:

Կոալիցիայի առաքելությունը

Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիան հաշմանդամություն ունեցող անձանց ներկայացնող կազմակերպությունների, իրավապաշտպան հասարակական կազմակերպությունների և անհատների միավորում է, որը նպատակ ունի նպաստել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանը՝ ջատագովության և հանրային իրազեկման միջոցով:

Կոալիցիայի արժեքները և սկզբունքները

- Ներառականություն
- Իրավունքահենք մոտեցում
- Խտրականության բացառում
- Հավասարություն և համերաշխություն
- Հաշվետվողականություն և թափանցիկություն

Կոալիցիան ներկայացնում է հաշմանդամություն ունեցող անձանց շահերը՝ առանց խտրականության:

Որպես հասարակական կազմակերպությունների և անհատների միավորում Կոալիցիան առաջնորդվում է համերաշխության և գործընկերային հարաբերությունների, անդամների անկախության նկատմամբ հարգանքի, անաչառ և մասնակցային կառավարման սկզբունքներով:

Կոալիցիայի գործունեության հիմքում որպես սկզբունք և որպես վերջնարդյունք ընկած է հաշմանդամություն ունեցող անձանց առաջնորդությունը:

Ռազմավարական ուղղություններ

Ռազմավարական նպատակ 1. Նպաստել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության օրենսդրության բարելավմանը

Ենթանպատակներ

1.1. Հակախտրականության համապարփակ օրենսդրության առկայություն
1.2. Ոլորտային օրենքների և քաղաքականությունների համապատասխանեցում «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքին
1.3. «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքից բխող ենթաօրենսդրական ակտերի և օրենքի կիրարկման մեխանիզմների առկայություն

Հաջողության ցուցիչներ

- Ընդունված օրենսդրությունը համապատասխանում է մարդու իրավունքների միջազգային չափանիշներին, նախատեսում է կիրարկման արդյունավետ մեխանիզմներ
- Օրենսդրական դաշտի բարելավումն իրականացվել է Կոալիցիայի ակտիվ մասնակցությամբ

Ռազմավարական նպատակ 2. Հզորացնել հաշմանդամություն ունեցող անձանց՝ անկախ կյանքի իրավունքն իրացնելու նպատակով

Ենթանպատակներ

1.1. Համայնքահենք ծառայությունների ներդրման քաղաքականության առկայություն և ծառայությունների ներդնում
1.2. Ապաինստիտուցիոնալացման գործընթացի համապարփակ քաղաքականության առկայություն
1.3. Հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց ընտանիքների իրազեկվածություն անկախ կյանքի իրավունքի վերաբերյալ

Հաջողության ցուցիչներ

- Քաղաքականությունների մշակման գործընթացն իրականացվել է Կոալիցիայի ակտիվ մասնակցությամբ
- Ներդրվել և գործում են անկախ կյանքի համայնքահենք ծառայություններ
- Նվազել է հաշմանդամություն ունեցող անձանց մուտքը շուրջօրյա խնամքի ինստիտուցիոնալ հաստատություններ
- Անկախ կյանքի իրավունքի վերաբերյալ իրազեկվածության աճ է գրանցվել հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց ընտանիքների շրջանում

Ռազմավարական նպատակ 3. Նպաստել ֆիզիկական և տեղեկատվական մատչելիության ապահովմանը ՀՀ մայրաքաղաքում և մարզերում

Ենթանպատակներ

2.1. Ֆիզիկական և տեղեկատվական մատչելիության չափորոշիչների սահմանում և վերահսկող մեխանիզմի գործառույթների ամրագրում օրենսդրական դաշտում
2.2. Հաշմանդամության հիմնահարցերով զբաղվող պետական, ՏԻՄ և մարզային կառույցների կարողությունների զարգացում ֆիզիկական և տեղեկատվական մատչելիության վերաբերյալ
2.3. Համայնքային ենթակառուցվածքների զարգացման ծրագրերով զբաղվող կառույցների գիտելիքների և կարողությունների զարգացում ֆիզիկական և տեղեկատվական մատչելիության վերաբերյալ
2.4. Հաշմանդամություն ունեցող անձանց ընտրական և քաղաքական գործընթացներում մասնակցության խթանում

Հաջողության ցուցիչներ

- Մշակվել և ընդունվել են տեղեկատվական մատչելիության չափորոշիչները
- Մշակվել և ընդունվել են ֆիզիկական մատչելիության չափորոշիչները և վերահսկողության գործառույթները
- Իրականացվել են կարողությունների զարգացման և իրազեկման միջոցառումներ համապատասխան կառույցների աշխատակազմի մասնակցությամբ
- 2022-2024 թթ. իրականացված ենթակառուցվածքների զարգացման ծրագրերում ապահովված է ֆիզիկական և տեղեկատվական մատչելիությունը
- Ապահովված է ՏԻՄ պաշտոնական կայքերի մատչելիությունը վիզուալ պատկերների, ձայնային և տեսահոլովակների կիրառման միջոցով

Ռազմավարական նպատակ 4. Նպաստել ներառական կրթության ապահովմանը կրթության բոլոր մակարդակներում

Ենթանպատակներ

3.1. Օրենսդրության վերանայում և համապատասխանեցում միջազգային չափորոշիչներին
3.2. Աջակցող տեխնոլոգիաների տրամադրման իրավական հիմքերի և պաշտպանության մեխանիզմների ձևավորում կրթության բոլոր մակարդակներում
3.3. Կրթությանն աջակցող ծառայությունների (մասնագիտական և ոչ մասնագիտական) կարիքի գնահատում և ներդնում
3.4. Ուսումնական մատչելի ձևաչափով նյութերի մշակում և կիրառում
3.5. Ուսումնական հաստատությունների ֆիզիկական մատչելիություն

Հաջողության ցուցիչներ

- Հանրակրթության մասին օրենքը համապատասխանում է Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և Երեխայի իրավունքների մասին կոնվենցիաներին
- Օրենսդրական դաշտի բարելավումն իրականացվել է Կոալիցիայի ակտիվ մասնակցությամբ
- Առկա են որակյալ ներառական կրթության և աջակցող տեխնոլոգիաների տրամադրման մեխանիզմներ
- Ի դեմս տեսչական մարմնի առկա է հաշմանդամություն ունեցող անձանց համար կրթության մատչելիության վերահսկողության արդյունավետ մեխանիզմ:
- Առկա է կրթությանն աջակցող ծառայությունների կարիքի գնահատման զեկույց և ծառայությունների ներդրման առաջարկությունների փաթեթ
- Տարեկան բյուջեի ձևավորում ըստ գնահատված կարիքի
- Առկա են և կիրառվում են մատչելի ուսումնական նյութեր
- Վերակառուցվող և նոր կառուցվող կրթական ենթակառուցվածքները համապատասխանում են մատչելիության չափանիշներին

Ռազմավարական նպատակ 5. Նպաստել զբաղվածության ոլորտում հաշմանդամության հիմքով խտրականության բացառմանը և աշխատաշուկա մտնելու խոչընդոտների նվազեցմանը

Ենթանպատակներ

4.1. Հաշմանդամություն ունեցող անձանց իրազեկության և գիտելիքների մակարդակի բարձրացում պետական զբաղվածության ծրագրերի, մասնագիտական կողմնորոշման ծառայությունների վերաբերյալ
4.2. Գործատուների իրազեկության բարձրացում հաշմանդամություն ունեցող անձանց հետ աշխատելու, հակախտրական մոտեցումների և խելամիտ հարմարեցումների վերաբերյալ
4.3. Աշխատաշուկայում հաշմանդամություն ունեցող անձանց ներգրավվածության իրավիճակի գնահատում և խոչընդոտների վերհանում
4.4. Միջավայրային հարմարեցումների ապահովում
4.5. Զբաղվածության պետական ծրագրերի արդյունավետության բարելավում

Հաջողության ցուցիչներ

- Զբաղվածության ծրագրերի վերաբերյալ իրազեկվածության աճ է գրանցվել հաշմանդամություն ունեցող անձանց մոտ

- Հաշմանդամություն ունեցող անձանց հետ աշխատելու, հակախտրական մոտեցումների և խելամիտ հարմարեցումների վերաբերյալ իրազեկվածության աճ է գրանցվել գործատուների մոտ
- Վեր են հանվել աշխատաշուկայում հաշմանդամություն ունեցող անձանց ներգրավվածության խնդիրները և մշակվել է առաջարկությունների փաթեթ (զբաղվածության պետական ծրագրեր, աշխատանքի տեսչական մարմին գործառույթներ, միջավայրային հարմարեցումների տրամադրում, և այլն)

Ռազմավարական նպատակ 6. Ապահովել ֆիզիկական և հոգեկան առողջության իրավունքը

Ենթանպատակներ

5.1. Առողջության համապարփակ ապահովագրության ներառականության ապահովում
5.2. Առողջապահական հաստատությունների կողմից տրամարդվող ծառայությունների մատչելիության բարձրացում
5.3. Դեղերի տրամադրման համակարգի փոփոխություն
5.4. Վերականգնողական բժշկության ռազմավարական փաստաթղթի մշակում և ընդունում
5.5. Հոգեկան առողջության հայեցակարգի ընդունում
5.6. Հոգեկան առողջության վերաբերյալ հանրային իրազեկում
5.7. Իրազեկված համաձայնության համակարգի ձևավորում
5.8. Ամոքիչ խնամքի ռազմավարական փաստաթղթի ընդունում

Հաջողության ցուցիչներ

- Առողջության համապարփակ ապահովագրության ներառականության վերաբերյալ իրականացվել է ուսումնասիրություն: Համակարգը ձևավորվել է՝ հաշվի առնելով Կոալիցիայի առաջարկությունները:
- Բժշկական կենտրոնների ղեկավար կազմի մոտ գրանցվել է իրազեկվածության աճ մատչելիության վերաբերյալ: Ապահովվել է բժշկական կենտրոնների մատչելիությունը:
- Ընդունվել է դեղերի տրամադրման համակարգի փոփոխությունների նախագիծ՝ հաշվի առնելով Կոալիցիայի առաջարկությունները:
- Ընդունվել է վերականգնողական բժշկության ռազմավարական փաստաթուղթ՝ հաշվի առնելով Կոալիցիայի առաջարկությունները:
- Ընդունվել է հոգեկան առողջության հայեցակարգը՝ հաշվի առնելով Կոալիցիայի առաջարկությունները:
- Հանրության շրջանում բարձրացել է հոգեկան առողջության վերաբերյալ իրազեկվածությունը:

- Վերանայվել են իրազեկված համաձայնության վերաբերյալ իրավական ակտերը՝ հաշվի առնելով Կոալիցիայի առաջարկությունները:
- Ընդունվել է ամոքիչ խնամքի ռազմավարական փաստաթուղթ՝ հաշվի առնելով Կոալիցիայի առաջարկությունները:

Ռազմավարական նպատակ 7. Կոալիցիայի ինստիտուցիոնալ զարգացում

Ենթանպատակներ

6.1. Կոալիցիայի կառուցվածքի և որոշումների կայացման ընթացակարգի հաստատում
6.2. Կոալիցիայի անդամակցության ընթացակարգի ընդունում
6.3. Կոալիցիայի հաղորդակցության ռազմավարության ընդունում
6.4. Կոալիցիայի ջատագովության ռազմավարության ընդունում
6.5. Արտակարգ իրավիճակներին արձագանքելու ընթացակարգի ընդունում
6.6. Ֆինանսական ռեսուրսների կայունության ապահովում
6.7. Կոալիցիայի աշխարհագրական և ոլորտային ընդլայնում

Հաջողության ցուցիչներ

- Համատեղ մշակվել և հաստատվել են Կոալիցիայի գործունեության առանցքային ռազմավարությունները և ընթացակարգերը
- Ապահովված է Կոալիցիայի ֆինանսական աղբյուրների բազմազանությունը
- Կոալիցիան ընդլայնվել է՝ ներառելով ՀՀ տարբեր մարզեր և հաշմանդամություն ունեցող անձանց տարբեր խմբեր ներկայացնող նոր անդամներ: